

ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ
«Վէմ» ակումբի առաջին հաւաքի

Ամսաթիւ.
Անցկացման վայր.
Ժողովի սկիզբ.
Օնլայն մասնակցութեան միջոցներ.

04 դեկտեմբերի, 2010թ.
Երեւան, Փ. Բուզանդի 1/3, «Վէմ» ստուդիա
17:00
N/A

Ներկայ էին.

Հաւաքին իրենց մասնակցութիւնը հաստատած 17 անդամներից ներկայ էին 15-ը՝ Մեսրոպ քին. Արամեան, Կիւրեղ քին. Տալեան, Անահիտ Բախշեան, Թովմաս Սամուէլեան, Արտակ Զիրուխչեան, Յովհաննէս Գրիգորեան, Արամ Արամեան, Սարգիս Ղազարեան, Արայիկ Մկրտչեան, Արթուր Աղաջանեան, Արմէն Մարգարեան, Շահէն Ծառուկեան, Արգաւանդի Սր Սարգիս եկեղեցու ծխական համայնքի ներկայացուցիչ Մուրադ Մեժլումեան, Մարտիրոս Մինասեան, Սանուկ Հերզնեան:

Օրակարգ

1. Ողջունի խօսք - տ. Մեսրոպ քին. Արամեան
2. Համերգ
3. Ընդմիջում
4. Պատմական ակնարկ «Վէմ» ռադիոյի մասին
5. Քննարկում, մտքերի փոխանակութիւն
ա) կանոնակարգային խնդիրներ
բ) ակումբի նոր անդամների ներգրաւում
գ) հաւաքների անցկացման, դրանց տեղի եւ ձեւաչափի քննարկում
դ) սփռում
ե) հաղորդումների քննարկում. թեմաներ, դիմագծային հաղորդումներ, լրատութիւն
զ) ԶԼՄ-ների դերը եւ ռադիոյի գովազդը
է) ակումբի գործունէութեան արտացոլումը լրատումիջոցներում եւ «Վէմի» կայքում
6. Զեկոյց Մոսկուա-ժնեւ-Մոնրէալ այցելութիւնների արդիւնքների մասին
7. Ամփոփում - տ. Մեսրոպ քին. Արամեան

Քննարկում

1. Ողջունելով մասնակիցներին՝ տ. Մեսրոպ քին. Արամեանը ներկայացրեց հաւաքի օրակարգը:
2. Ներկաներն ունկնդրեցին դասական երաժշտութեան համերգ՝ «Վեմ» կամերային անսամբլի կատարմամբ:
3. Ընդմիջման ընթացքում ակումբի անդամները հնարաւորութիւն ունեցան ծանօթանալ ու շփուել միմեանց հետ:
4. Տ. Մեսրոպը համառօտ ներկայացրեց «Վէմ» ռադիոյի ստեղծման պատմութիւնն ու անցած ճանապարհը՝ «Գանձասար» աստուածաբանական կենտրոնից մինչեւ ռադիո, ապա հեռուստատեսութիւն եւ ֆիլմարտադրութիւն, բնապահպանական վաւերագրական ֆիլմերից մինչեւ միջազգային ասպարէզում լուրջ յաղթանակներ արձանագրած «Արարատից Սիոն» ֆիլմը:

5ա. Կանոնակարգային խնդիրներ:

Որոշուեց, որ «Վէմ» ակումբը չի դառնայ առանձին կառոյց՝ բիրոկրատական անխուսափելի տարրերով: Այն իրականում «Վէմ» ռադիոկայանի ընկերների, համախոհների, աջակիցների ակումբ է (կրճատ անուանումն է՝ «Վէմ» ակումբ), որն իր գործունէութեամբ նպաստում է «Վէմ» ռադիոկայանի հզօրացմանը: Ակումբը միաւորում է մարդկանց, ովքեր պատրաստ են աջակցել ռադիոկայանին իրենց ներդրումներով, գաղափարներով: «Վէմ» ակումբին անդամագրուելը իրականացում է կամաւորութեան սկզբունքով: Քննարկուեց նաեւ ակումբի անդամութեան որոշակի սահմանափակումներ դնել-չդնելու հարցը, սակայն վերջնական որոշում առայժմ չընդունուեց: Ակումբը կ'ունենայ իր գործունէութեան կարգը, բայց ոչ՝ կանոնադրութիւն:

Անդամների կարծիքները, գաղափարները շատ արժէքաւոր են ռադիոկայանի համար, բայց չեն կարող լինել պարտադրական:

5բ. Ակումբի նոր անդամների ներգրաւում:

Արայիկ Մկրտչեանը բարձրացրեց ակումբի անդամների թուի սահմանափակման հարցը: Քննարկման արդիւնքում որոշուեց, որ ակումբի անդամները կ'անդրադառնան այս քննարկմանը, երբ անդամների թիւը հասնի 50-ի, եւ պարզ լինի նոր մարդկանց աւելացման դիմանալիկան:

Որոշուեց, որ նոր անդամներին պէտք է երաշխաւորի առնուազն երկու ակումբի անդամ, ինչը թոյլ կը տայ խուսափել «պատահական» մարդկանց ներգրաւելուց:

5գ. Հաւաքների անցկացման, դրանց տեղի եւ ձեւաչափի քննարկում:

Որոշուեց, որ նախընտրելի տարբերակն է՝ ամսական 1 անգամ՝ ամսուայ վերջին շաբաթ օրը եւ տարեկան մէկ անգամ՝ մեծ հաւաք: Տ. Մեսրոպ քին. Արամեանը առաջարկեց ընտրել տարբեր թանգարաններ, հետաքրքրիւր վայրեր՝ Գաֆէսճեան, Փարաջանով կամ վանքեր: Առաջարկ արուեց ունենալ մի մշտական հաւաքատեղի Երեւանում կամ քաղաքից դուրս: Արտակ Զիրուխչեանը ասաց, որ Ենոքաւանում մի ազատ քարանձաւ ունի ու սիրով կը տրամադրի այն «Վէմ» ակումբին: Արայիկ Մկրտչեանը առաջարկեց «Ալ Լէոնի» ռեստորանը՝ մինչեւ որոշուի հաւաքների ձեւաչափը: Յաջորդ հանդիպման տեղը չորոշուեց. մասնակիցները խօստացան մտածել եւ առաջարկներ անել:

5դ. Ռադիոյի հանրապետական սփռում:

Հարց բարձրացուեց հանրապետական սփռման մասին: Տ. Մեսրոպ քին. Արամեանը տեղեկացրեց, որ այժմ ռադիոյի ծածկոյթը կազմում է բնակչութեան 70%-ը, բայց նոր հաղորդիչը, որ այժմ տեղադրուում է, կը ծածկի մինչեւ Ապարան, Սեւան եւ Երասխ, իսկ Երեւանում ազդանշանը զգալի կ'ուժեղանայ: Ազդանշանը հեռուստաաշտարակ է գնալու օպտիկական մալուխով, եւ որակական կորուստներ չեն լինի: Հանրապետական սփռման համար մեզ պէտք է 14 ենթակայան, ինչը շատ ծախսատար է: Խօսուեց սփռման հարցում թեմերի ընդհանուր պասիւութեան մասին՝ բացառութեամբ Արցախի եւ Գուգարաց թեմերի (մասնաւորապէս՝ Վանաձորի): 300,000 դոլար է ծախսուել ռադիոյի ստեղծման համար: Ռադիոն պատրաստ է համագործակցել ցանկացած հանրապետական ռադիոկայանի հետ, որը կարող է «մաքուր ափստով» մատուցել տուածը: Քննարկման արդիւնքում որոշուեց յետագայ հաւաքներին հրաւիրել տեղերից պատասխանատուների, թեմերի առաջնորդների, գործարարների, քաղաքապետերի, գիւղապետերի եւ այլ ազդեցիկ մարդկանց եւ ներգրաւել նրանց տեղում ռադիոյի տարածման գործում:

Որոշուեց՝ փորձել մէկ տարուայ ընթացքում ապահովել «Վէմ» ռադիոյի սփռումը ամբողջ հանրապետութիւնով եւ քննարկել տեղերում գործընկերների արդէն առկայ ինֆրաստրուկտուրայի օգտագործման հնարաւորութիւնը՝ անհրաժեշտ ծախսերը նուազեցնելու նպատակով:

5ե. Հաղորդումների քննարկում. թեմաներ, դիմագծային հաղորդումներ, լրատութիւն

Տ. Մեսրոպ քին. Արամեանը ցանկութիւն յայտնեց, որպէսզի դիմագծային հաղորդումների շրջանակներում հարցազրոյցներ կազմակերպուեն ակումբի անդամների հետ՝ կարելորելով նրանց ունեցած հարուստ փորձառութիւնը, եւ հարցրեց ներկաների թոյլտւոյունն ու կարծիքը: Արայիկ Մկրտչեանը մտավախութիւն արտայայտեց, որ բիզնեսի ներկայացուցիչների հետ հարցազրոյցները կարող են ընկալուել որպէս գովազդ: Մանուկ Հերզնեանը նշեց, որ պարտադիր չէ, որ բիզնեսի մասին խօսուի զրոյցի ժամանակ: Ամփոփելով քննարկումը՝ տ. Մեսրոպ քին. Արամեանը հրաւիրեց բոլոր ցանկացողներին՝ քննարկելու հնարաւոր թեմաները:

Այնուհետեւ տ. Մեսրոպը տեղեկացրեց, որ պատրաստուում է ամենաթանկ բլոկը՝ լրատութիւնը: Այժմ որոնումների փուլն է. պիտի պատրաստուի լաւ լրատութիւն եւ լաւ ընթերցուի: Պլանաւորուում է դէկտեմբերի մէջ գտնել այդ բանաձեւը եւ յունուարից բաց թողնել եթեր: Ի շարունակութիւն «Արժէքներ եւ իրականութիւն», «Աշխարհայեացք» հաղորդաշարերի՝ ծրագրուում է նոր աշխարհայեացքային-փիլիսոփայական հաղորդաշար:

Թովմաս Սամուէլեանը առաջարկում է կրթական բնոյթի հաղորդաշար. այժմ «Այբի» հետ քննարկում է նման հաղորդաշարի ստեղծման հնարաւորութիւնը: Մասնակիցները

տեղեկացուեցին նաեւ, որ հանդիպում է եղել NPR- ում, եւ իրենք պատրաստ են մէկ-երկու անգլերէն հաղորդում տրամադրել: Նոյնը եւ «էխո Մոսկվին»: նրանք եւս պատրաստ են մէկ-երկու հաղորդում անվճար տրամադրել:

S. Կիրեղ քին. Տալեանը առաջարկեց հետեւեալ թեմաները՝ «Հոգեւոր մանկավարժութիւն» եւ «Վկայութիւններ» (ինչպէս է մարդը գտել Աստծուն): Մեսրոպ քին. Արամեանը նշեց, որ փորձել են վկայութիւններ ծայնագրել, բայց դրանք խիստ սուբյեկտիւ պատմութիւններ են եղել, որոնք տարածուելիս արժէգրկուում են:

S. Կիրեղը հարցրեց՝ ինչպէս հասանելի դարձնել Մկրտութեան նախապատրաստութեան վերաբերեալ տեղեկատուութիւնը: Եղան առաջարկներ՝ օգտագործել ինտերնետի լայն հնարաւորութիւնները, նաեւ՝ ռադիոն, հեռուստատեսութիւնը:

Արտակ Զիբուխչեանը հարցրեց մանկական, իսկ Մանուկ Հերզեանը՝ սոցիալական թեմաներով հաղորդումների մասին: Քննարկուեց հաղորդումների հասանելութիւնը ունկնդիրներին՝ տանը, մեքենայում եւ այլ միջավայրերում: Նշուեց հաղորդումները ինտերնետից բեռնելու հնարաւորութիւնը:

5գ. ԶԼՄ-ների դերը եւ ռադիոյի գովազդը:

Մասնակիցներն իրենց դժգոհութիւնը յայտնեցին ԶԼՄ-ների գործունէութիւնից եւ համաձայնուեցին, որ պէտք է դժգոհութիւնը վերածել խնդրի:

Որոշուեց, որ կայանին անհրաժեշտ է գովազդ եւ PR, որպէսզի հնարաւոր լինի ուղղորդել ունկնդիրին: Որոշուեց բիւջէում նախատեսել անհրաժեշտ գովազդային ծախսերը եւ պարոն Նուշիկեանի հետ քննարկել բիլբորդների վարձակալութեան հնարաւորութիւնը: S. Մեսրոպը նշեց, որ կայ պայմանաւորութիւն հեռուստաընկերութիւնների հետ ռադիոյի գովազդը՝ որպէս սոցիալական գովազդ անվճար տեղադրելու մասին:

Որոշուեց մի քանի գովազդային կարգախօս մշակել՝ մէկը ընտրելու նպատակով:

Արտակ Զիբուխչեանը առաջարկեց Ենոքաւանում առանձին տեղ յատկացնել՝ «Վէմի» եւ «Այբի» գործունէութիւնը ներկայացնելու համար: S. Մեսրոպը ասաց, որ նրանց գրադարանին կը տրամադրուեն «Վէմի» հրատարակութիւնները:

5է. Ակումբի գործունէութեան արտացոլումը լրատուամիջոցներում եւ «Վէմի» կայքում:

Ակումբի տրամադրութեան տակ դրուելու է «Վէմի» ինտերնետային կայքի «Համայնք» բաժինը, որը գաղափարների քննարկման, մտքերի փոխանակման ու ծանուցումների հարթակ կարող է ծառայել ակումբի անդամների համար: Ձեւաչափը դեռեւս կը քննարկուի:

6. Այցելութիւնները Մոսկուա, Մոնրէալ եւ Ժնեւ, որոնց ընթացքում ներկայացուել են «Այբ» դպրոցը, «Արարատից Սիոն» Ֆիլմը, ինչպէս նաեւ՝ նոր ֆիլմերի ստեղծման ծրագիրը, անցել են աննախադէպ յաջողութեամբ եւ արձանագրել լուրջ արդիւնքներ:

Հայկական դպրոց է բացուելու՝ առաջինը 2011 թուականին, Երեւանում, 2012-ին՝ Կիպրոսում, ապա՝ այլ երկրներում:

Մոսկուայում քննարկուեց Նարեկացու մասին ֆիլմի ծրագիրը: Ծրագրուել է նկարահանումները սկսել 2011թ. մայիսին:

Քննարկուում է Twentieth Century-Fox Film Corporation-ի հետ համատեղ «Վարդանանք» ֆիլմի նկարահանումը:

7. Ամփոփելով հաւաքը՝ տ. Մեսրոպը շնորհաւորեց բոլորին ակումբի կայացման, հետաքրքիր եւ արդիւնաւէտ քննարկումների համար: Դրա խօսուն վկայութիւնը եղաւ նաեւ հաւաքին մասնակցող Տիգրան Ուզունեանի անդամագրումը «Վէմ» ակումբին:

Որոշումներ.

ա) «Վէմ» ակումբի հերթական ամենամսեայ հաւաքը, նախնական պայմանաւորութեամբ, տեղի կ'ունենայ դեկտեմբերի 25-ին, շաբաթ օրը: Հանդիպման տեղի եւ ժամի մասին կը տեղեկացուի յաւելեալ:

բ) «Վէմ» ակումբը չի դառնայ առանձին կառոյց:

գ) Ակումբի անդամների թուի սահմանափակման հարցը կը քննարկուի նորից, երբ անդամների թիւը հասնի 50-ի:

դ) Նոր անդամներին պէտք է երաշխաւորի առնուազն երկու ակումբի անդամ:

է) Ակումբի հաւաքները տեղի կ'ունենան ամսական 1 անգամ՝ ամսուայ վերջին շաբաթ օրը, եւ տարեկան մէկ անգամ կը կայանայ մեծ հաւաք:

զ) Հաւաքներին (արտագնայ հաւաքներին) հրաւիրել մարզերի ազդեցիկ մարդկանց եւ ներգրաւել նրանց տեղում ռադիոյի տարածման գործում:

է) Ձգտել մէկ տարուայ ընթացքում ապահովել «Վէմ» ռադիոյի սփռումը ամբողջ հանրապետութիւնով:

ը) Բիւջէում նախատեսել անհրաժեշտ գովազդային ծախսերը եւ քննարկել բիւբորդների վարձակալութեան հնարաւորութիւնը:

թ) Մշակել մի քանի գովազդային կարգախօս՝ մէկը ընտրելու նպատակով:

ժ) Ակումբի տրամադրութեան տակ դրուելու է «Վէմի» ինտերնետային կայքի «Համայնք» բաժինը:

Նախագահող՝

Մեսրոպ քին. Արամեան

Քարտուղար՝

Հ. Բաբաջանեան